

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Առաջին Չատիկը




Written by: Edward Hughes  
Illustrated by: Janie Forest  
Adapted by: Lyn Doerksen  
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
dedicated to my Son Lordling Zareh Varant  
funded by: Zareh Seropian & Sons Foundation  
special thanks: to my wife  
gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.  
Produced by: Bible for Children  
[www.M1914.org](http://www.M1914.org)

BFC  
PO Box 3  
Winnipeg, MB R3C 2G1  
Canada

©2012 Bible for Children, Inc.  
License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.

1

Կին մը կեցած էր  
աղմուկոտ լեռան  
լանջին, անոր աչքերը  
տիրութեամբ կը  
նայէին սարսափելի  
տեսարանի մը:  
Անոր տղան կը  
մեռներ: Մայրը  
Մարիամն էր, ան  
կեցած էր այն  
վայրին մօտ,  
ուր Յիսուս  
գամուած  
էր խաչին:




2




Ինչպե՞ս այս բոլորը եղաւ:  
 Ի՞նչպէս կրնայ Յիսուս  
 այնչափ աղուոր կեանքի  
 մը վերջ տայ այս տխուր  
 եւ սարսափելի  
 ձեռով: Ի՞նչպէս  
 Աստուած  
 կ'արտօնէ,  
 որ իր որդին  
 գամուի խաչին վրայ  
 եւ հոն վախճանի:  
 Արդե՞ք Յիսուս սխալած  
 է իր ինքնութեան:  
 Արդե՞ք Աստուած  
 ձախողեցաւ:

3




Ո՛չ: Աստուած  
 չձախողեցաւ: Յիսուս  
 որեւէ սխալ չգործեց:  
 Յիսուս արդէն իսկ  
 գիտէր, որ ան մահուան  
 պիտի ենթարկուի  
 գէշ մարդոց ձեռքով:  
 Նոյնիսկ երբ Յիսուս  
 տակաւին նորածին էր  
 ծեր մարդ մը, որ  
 Սիմիէոն կը կոչուէր,  
 ըսած էր Մարիամին,  
 որ դժբախտութիւն  
 կը սպասէր:

4




Յիսուսի  
 մահուրնէ  
 քանի մը օր  
 առաջ տիկին մը  
 կու գայ եւ անոր  
 ոտքերուն անուշահոտ  
 կը թափէ: "Ան դրամ կը  
 վատնէր" աշակերտները  
 կը գանգատէին:  
 "Ան շատ լաւ գործ  
 ըրաւ", կ'ըսէ Յիսուս.  
 "Ան ըրաւ այդ բոլորը  
 իմ թաղմանս համար":  
 Ինչ տարօրինակ բառեր:

5




Ասկէ ետք, Յուդա,  
 Յիսուսի տասներկու  
 աշակերտներէն մին,  
 համաձայնեցաւ մատնել  
 Յիսուսի եւ անոր յանձն  
 քահանայապետին  
 երեսուն հատ  
 արծաթ ոսկիի  
 համար:

6



Հրեական Չատիկ տօնին,  
 Յիսուս իր վերջին ճաշը կերաւ  
 իր աշակերտներուն հետ: Անոնց  
 սքանչելի բաներ պատմեց  
 Աստուծոյ եւ իր խոստումներուն,  
 անոնց որ իրեն կը սիրէն: Ատկէ  
 ետք Յիսուս առաւ հացը եւ  
 գաւաթը ու բաժնեց անոնց: Այս  
 բոլորը, որ յիշեցնեն  
 իրենց, թէ  
 Յիսուսի  
 մարմինն ու  
 արիւնն են, որ կը  
 տրուին, որպէսզի  
 մեղքերը ներուին:

7



Յետոյ Յիսուս ըսաւ իր բարեկամներուն, որ ինք  
 պիտի դաւաճանուի եւ իրենք պիտի փախչին: "Ես  
 չեմ փախչիր" ըսաւ Պետրոս: "Առաջ որ աքլորը  
 (աքաղաղը) աղաղակէ, դուն ինծի պիտի դրժես  
 երեք անգամ", ըսաւ Յիսուս:


8




Այդ օրուան ուշ գիշերին Յիսուս գնաց աղօթելու Գեթսեմանի պարտեզին մեջ: Աշակերտները, որոնք հետն էին բոլորն ալ քնացան: "Օ, իմ հայրս" Յիսուս աղօթեց, "հեռացուր ինձմէ այս գաւաթը, սակայն ոչ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ ինչպէս որ դուն կ'ուզես":

9

Յանկարծ խուժան մը քալեց դէպի պարտեզ Յուդային առաջնորդութեամբ: Յիսուս երբեք դիմադրութիւն չըրաւ, սակայն Peterը մարդու մը ականջը կտրեց: Անձայն, Յիսուս դպաւ մարդուն ականջին եւ բուժեց զայն: Յիսուս գիտեր, որ Նորէն ձերբակալուիլը Աստուծոյ կամքով է, որ կ'ըլլար:




10



Ժողովը տարաւ Յիսուսը քահանայապետին տունը: Հոն հրեայ մեծաւորները ըսին, որ Յիսուս պետք է մեռնի: Մօտը Պետրոս կեցած էր ծառաներուն կրակին մօտ եւ կը դիտեր:

11




Երեք անգամ ժողովուրդը նայեցան Պետրոսին եւ ըսին. "Դուն Յիսուսի հետ էիր" երեք անգամ ալ Պետրոս դրժեց այդ իրականութիւնը, ինչպէս որ Յիսուս ըսած էր, որ պիտի ըլլայ: Մինչեւ իսկ Պետրոս անիծեց եւ սուտ երդում ըրաւ:

12



Ատկէ ետք աքլորը աղաղակեց: Կարծես թէ այդ Աստուծոյ ձայնն էր Պետրոսի համար: Յիշելով Յիսուսի բառերը Պետրոս ծանրօրէն լացաւ:


13



Յուդան ալ զղջաց:

Ան գիտեր, որ Յիսուս որեւէ մեղք կամ ոճիր չէ գործած: Յուդան առաւ 30 արծաթ դրամները եւ ետ դարձուց, սակայն քահանաները մերժեցին ետառնել: Յուդա թափեց դրամը, գնաց եւ ինքզինք կախեց:


14



Քահանաները Յիսուսը բերին Պիղատոսին, հռոմեացի կառավարիչին: Pilate ըսաւ.


"Ես որեւէ մէկ սխալ չեմ գտներ այս մարդուն մէջ", սակայն ժողովը շարունակեց ճշալ "Խաչեցէք իրեն, խաչեցէք իրեն":

15



Վերջապէս Պիղատոս տեղի տուաւ եւ Յիսուսը խաչի վրայ մահուան դատապարտեց: Չինուորները կը զարնէին Յիսուսին եւ կը թքէին անոր երեսին եւ վրան կը խնդային: Փուշերով թագ մը շինեցին եւ անոր գլխուն վրայ հրեցին: Յետոյ Ասոր քամեցին տախտակէ խաչի մը վրայ, որպէսզի մեռնի:

16



Սկիզբէն Յիսուս արդէն գիտեր, որ ինք այդ ձեւով է, որ պիտի մեռնի: Ան նաեւ գիտեր, որ իր մահը ներում պիտի բերէր բոլոր մեղք գործողներուն,


որոնք իրենց վատահուօթիւնը կը դնէին իր վրայ: Երկու ոճրագործներ ալ Յիսուսի կողքին խաչուած էին: Անոնցմէ մէկը հաւատաց Յիսուսի եւ դրախտ բարձրացաւ: Միւսը չհաւատաց Ասոր:

17




Չարչարանքէն ժամեր ետք Յիսուս ըսաւ. "Այլեւս վերջացաւ" եւ մեռաւ: Իր գործը կատարուած էր: Բարեկամները Յիսուսը թաղեցին անձնական գերեզմանի մէջ:

18



Հռոմեացի զինուորները կղպեցին եւ հսկեցին եւ գերեզմանը: Հիմա որեւէ մէկը չի կրնար ոչ ներս եւ ոչ ալ դուրս գայ այդ տեղէն:


19



Եթէ այս ըլլար պատմութեան վերջը, ինչ տխուր պիտի ըլլար: Սակայն Աստուած հրաշալի բան մը ըրաւ: Յիսուս մեռած չի մնաց:

20

Առտու կանուխ շաբթուան առաջին օրը Յիսուսի աշակերտներն մի քանին տեսան, որ ժայռը գլորուէր Էր դամբարանին առջեւէն: Երբ դէպի ներս նայեցան տեսան,



որ Յիսուս հոն չէ:

21

Կին մը մնաց գերեզմանին մէջ, որ սաստիկ կու լար: Յիսուս երեւցաւ անոր: Ան ուրախութեամբ վազեց, որպէսզի պատմէ աշակերտներուն: "Յիսուս ողջ է, Յիսուս ետ եկաւ մեռելներէն":



22

Շատ շուտ Յիսուս եկաւ իր աշակերտներուն եւ անոնց ցոյց տուաւ իր գամուած ձեռքերուն վերքերը, իրականութիւն Էր: Յիսուս ողջ Էր: Ան ներեց Peterին, որ զինք դոժեր Էր, եւ ըսաւ, որ լուրը տարածեն բոլորին: Ասկէ ետք Ան իր ողջ ըլլալուն երկինք բարձրացաւ, ուրկէ որ եկած Էր առաջին կաղանդին:

23

Առաջին Չատիկը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը, Սուրբ իրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէս 26-28, Ղուկաս 22-24, Յովհաննէս 13-21


"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:" Սաղմոս 119:130

24



Վերջ

54



60

25

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր: Յովհաննէս 3:16

26